

## Կ Ո Ձ

## Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՒՊԱՐԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Մեր Հայ Հասարակութեան քաջ ծանօթ է որ Հայկական Բարե-  
գործական Ընդհանուր Միութեան «Նուպարեան» Մատենադարանը մօտ կէս  
դարէ ի վեր կը օգնէ միջազգային այս լոյսի ուստանին մէջ տանելու հան-  
րօգուտ առաքելութիւն մը՝ իր բազմաշարիւր Հայ թէ օտար հատորներով  
Հայ մշակոյթին ու պատմութիւնը ծանօթացնելու իր Հայ թէ օտար ընթեր-  
ցողներուն եւ ուսումնասիրողներուն, մասնաւորաբար հայազիտական մար-  
զերու մէջ:

Ծնորակալ ենք որ բազմաթիւ հեղինակներ, հրատարակիչներ ու  
թերթերու վարիչներ ինքնաբերաբար իրենց առաքումներով կը ճոխացնեն  
Մատենադարանը ու այդ կերպով զօրավիզ կը հանդիսանան մեր օրնազրու-  
թեան արդիւնաւորման:

Բայց կը թուի որմանց անծանօթ ըլլալ Մատենադարանին այս դերը  
ու կան հեղինակութիւններ որոնքմէ զրկուած կը մնանք:

Հետեւաբար կը ինդրենք բոլոր հեղինակներէն ու հրատարակիչնե-  
րէն, ու նաեւ բոլոր մեր ազգայիններէն որոնք իրենց մօտ ի պահ ունին մաս-  
նաւորաբար Հայութիւնը շահագրգռող հին թէ նոր հրատարակութիւններ,  
թերթերու կամ պարբերաթերթերու հաւաքածոներ ամէն լեզուէ, նոյնիսկ  
երաժշտական, Թատերական եւ նկարչական, որ բարեհաճին զանոնք նուիրել  
«Նուպարեան» Մատենադարանին՝ որպէսզի վերջինս լաւագոյնս կարենայ  
շարունակել իր առաքելութիւնը ու ընդարձակել իսկ զայն:

Առաքումները կատարել հետեւեալ հասցէով՝

BIBLIOTHEQUE NOUBAR de l'U. G. A. B.

11, Square Alboni —75— PARIS (16e) FRANCE

Կանխապաշտ օրով շնորհակալութիւններով,

Վարչութիւն

«ՆՈՒՊԱՐԵԱՆ» ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ